

ԱՅՏԸՆԵԱՆ - ԲԷՕՄ, «ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ»

Անահիտ Բաղդասարեան

Ինչպէս յայտնի է, Հայկական աւանդական միաձայն Պատարագը բազմիցս ձայնագրուել է, ընդ որում՝ ձայնագրութեան տարբեր Համակարգերով՝ խաղագրութեամբ, Հայկական նոտագրութեամբ (Լիմոնջեանի Համակարգ), եւրոպական նոտագրութեամբ: Ի յայտ են եկել Պատարագի մի շարք մեղեդիական տարբերակներ՝ ձեռագիր, տպագիր:

Ներկայ Հաղորդման շրջանակներում փորձել ենք անդրադառնալ 1886 թուականից Վիեննայի Մխիթարեան միաբանութեան արքահայր, եկեղեցական երաժշտութեան Հմուտ դիտակ, ձայնագրագէտ, երգիչ Արսէն արք. Այտընեանի (1825-1902) ձայնագրած աւանդական Պատարագին², որը պահպանուել եւ յայտնի է բազմաձայն մշակմամբ, որպէս երկհնչիւնակ Այտընեան - Բէօմ «Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» (այսուհետեւ՝ «Երգեցողութիւնք»), նախատեսուած քառաձայն խառն երգչախմբի, մենակատարների (սոպրանո, ալտ, տենոր), սիմֆոնիկ նու-

գախմբի եւ երգեհոնի Համար (Վիեննա, 1950):

Սա Հանդիսաւոր առիթներով մատուցող «Հայրապետական» Պատարագ է³, երբ պատարագիչը բարձրաստիճան հոգեւորական է: Ընդգրկում է Հայկական (Հայածէս) Պատարագի երգուածքների գրեթէ ողջ զանգուածը՝ շարականներ, մեղեդիներ, «Երեքսրբեան»-ը, պատարագեան երգեր, «Տէրունական» աղօթքը, երգող ծիսական բացականչութիւններ («Ամէն», «Ալելուիա»), քարոզներ: Դրանք անշարժ (Պատարագի իւրաքանչիւր մատուցմանը պարտադիր), նաեւ որոշ «շարժական» («ըստ աւուր պատշաճի»՝ օրուայ խորհրդին Համապատասխան) երգերն են (տե՛ս ստորեւ բերուած աղիւսակը), ինչպէս նաեւ՝

Աղիւսակ

Անշարժ երգեր	Շարժական երգեր
1 Խորհուրդ խորին	1 Հրաշափառ Աստուած
2 Թագաւոր երկնաւոր	2 Ընտրեալք
3 Բարեխօսութեամբ	3 Յայտարար
4 Սուրբ Աստուած	
5 Փա՛ռք Քեզ, Տէ՛ր	
6 Մարմին Տէրունական	
7 Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ	
8 Սուրբ, սուրբ	

3 Երգեցողութիւնք, Նախաբան, հեղինակ՝ Լ. Մովսէս Սրապեան: Հրատարակութեան տիտղոսաթերթին հայերէն խորագրի հետ մեկտեղ Աշուած է լատիներէն «Missa solemnus in ritu armeno» խորագիրը, թարգմանաբար՝ Հանդիսաւոր մեսսա (տե՛ս Музыкальный энциклопедический словарь, Москва, 1990, с. 340) կամ Հանդիսաւոր Պատարագ հայկական արարողակարգով:

1 Մեղեդիական տարբերակները գոյանում են բանաստեղծական նոյն տեքստի տարբեր մեղեդիներով եղանակաւորման ընթացքում, որ խիստ յատուկ է հայ աւանդական եկեղեցական երաժշտութեանը:
2 Նշելի է, որ, մասնատրապէս, հայ աւանդական (ժողովրդական, ժողովրդամասնագիտացուած՝ գուսանական, աշուղական, մասնագիտացուած՝ աշխարհիկ, եկեղեցական) երաժշտութեան ժանրերի, տաղաչափութեան, տիպաբանութեան և այլ հարցերով զբաղող երաժշտագէտների համար կարևոր նշանակութիւն ունի Այտընեան բազմաշնորհ արքեպիսկոպոստի լեզուաբանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» խորագրով (Վիեննա, 1866) ձեռագիր աշխատութիւնը:

9	Ամէն: Հայր երկնաւոր
10	Յամենայնի
11	Որդի Աստուծոյ
12	Հոգի Աստուծոյ
13	Հայր մեր
14	Միայն սուրբ
15	Ամէն: Հայր սուրբ
16	Օրհնեալ է Աստուած: Քրիստոս պատարագեալ
17	Լցաք
18	Գոհանամք

մանրամասնօրէն ներկայացուած՝ սարկաւազի եւ դպիրների փոխփոխ երգեցողութեամբ կատարուող Հատուածները:

Նոտային օրինակ 1⁴.



Առաջին անգամ Այտընեան-Բէօմի Պատարագը հնչել է 1887 թուականի ապրիլի 11-ին՝ Վիեննայում Այտընեան արքահայր եպիսկոպոսական ձեռնադրութեանը, եւ ժամանակակից վկայութեամբ՝ «բարձրաստիճան ունկնդիրներու վրայ խոր տպաւորութիւն մը կը թողու եւ անոնց զարմանք կը պատճառէ»⁵: Խնդրոյ անոնց զարմանք կը պատճառէ՝ ինչպէս նախնական քառաձայն Պատարագի նախնական քառաձայն խմբերգային տարբերակը լոյս է տեսել (վիմատիպ) աւելի վաղ՝ 1877-ին⁶: Նոյն թուականին լոյս տեսաւ Վենետիկի Մխիթարեանների բազմաձայն Պատարագը՝ «Les chants liturgiques de l'église arménienne» («Հայկական եկեղեցու Պատարագի երգեր») խորագրով (Վենետիկ, 1877),

որի մեղեդիները՝ ձայնագրել եւ բազմաձայնել էր Մուրադ-Ռաֆայելեան դպրոցի երգ-երաժշտութեան ուսուցիչ, իտալացի մասետրո Պիետրո Բիանքինին⁸:

Մխիթարեանների այս երկու՝ վենետիկեան եւ վիեննական «Հասակակից» Պատարագները աւանդական Պատարագի մեղեդիները բազմաձայնելու՝ նշանակալից եւ արդիւնաւէտ գործընթացը սկզբնաւորող առաջնեկներից էին, որ յետագայում շարունակուեց Ք. Կարա-Մուրզայի, տէր Եղնիկ աւագ քահանայ Երզնկեանցի, Էմի Արգարի եւ միւսների ջանքերով եւ պսակուեց Հայ կոմպոզիտորական դպրոցի դասականներ Մ. Եկմալեանի, Կոմիտաս վարդապետի կոթողային Պատարագներով:

Այտընեանի Հետ Համագործակցել են եւրոպացի երաժիշտներ Լաւրենտիոս Վայսը (Պատարագի նախնական՝ 1877 թուականի քառաձայն տարբերակը)⁹, ապա Յովսէփ (Յոզէֆ) Բէօմը՝ «Վիեննայի Հմուտ երաժշտագէտն ու խմբապետը»¹⁰, «որ Այտընեանի ձայնագրած ու երգած պատարագի եղանակները ճշգիւ կը ձեւակերպէ եւ կը ստանձնէ անոնց քառաձայն դաշնաւորումը եւ նուագախմբի բաժինը պատրաստելը»¹¹ (այս երաժշտի անունը, ինչպէս տեսանք, վկայուած է Պատարագի տիտղոսաթերթին՝ Այտընեան-Բէօմ), վերջապէս «Վիեննայի Համբաւաւոր երաժշտագէտ-երգահան» Մաքս Շպրինգերը¹², «որուն գործակցութիւնը եղած է գլխա-

7 Ըստ երաժշտագէտ Մ. Մուրադեանի՝ դա հայկական Պատարագի աւանդական մեղեդիների՝ վենետիկի Սուրբ Ղազար կղզում պահպանուած և ընդունուած տարբերակներն էին. տե՛ս Մ. Մուրադեան, Հայկական Պատարագը և ճիշտ մշակումները, «Հայկական արուեստ», յօդուածների ժողովածու, գիրք 2, Երևան, 1984, էջ 154:
8 Նոյն տեղում:
9 Երգեցողութիւնք, Նախաբան:
10 Նոյն տեղում:
11 Նոյն տեղում:
12 Նոյն տեղում:

4 Երգեցողութիւնք, էջ 40:
5 «Հանդէս ամսօրեայ», 1887, ապրիլ, թիւ 4, Յաւելուած. տե՛ս Երգեցողութիւնք, Նախաբան:
6 Երգեցողութիւնք, Նախաբան:

և որպես վերաքննել նուազախումբի եւ պատրաստել երգեհոնի բաժինները»¹³: Այստեղ նաև-Բէօմ Պատարագը արբաժոր կեանքի օրօք լոյս չի տեսել: Առաջին անգամ հրատարակուել է 1950 թուականին Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար Աբրահամյանի մահուան 200-ամեակի առթիւ¹⁴:

Այստեղ նաև-Բէօմի Պատարագը նշուել եւ ներկայացուել է երաժշտագիտական գրականութեան մէջ: Մեզ յայտնի աղբիւրներն են Մ. Մուրադեանի «Հայկական Պատարագը եւ նրա մշակումները», Ժ. Ռէիսեանի «Ս. Պատարագը եւ Հայկական Պատարագի զարգացումն ու բազմաձայն տարբերակները» («Տաթեւ» Հայագիտական տարեգիրք, 1, Հայէպ, 2008) արժէքաւոր աշխատութիւնները, որոնց շնորհակցութեամբ, ի թիւս Հայոց Պատարագի բազմաձայն այլ տարբերակների, անդրադարձ կայ նաև մեր խնդրոյ առարկայ Պատարագին: Սակայն վերջինս դեռևս չի ենթարկուել երաժշտատեսական բազմակողմանի եւ մանրամասն վերլուծութեան: Այս տեսանկիւնից որպէս Այտրենեան-Բէօմի Պատարագի վերլուծութեան սկզբնական փուլ փորձել ենք դիտարկել Պատարագի միայն մեղեդիները, դրանց բազմաձայն «Հանդերձի» դիտարկումը թողնելով յետագային: Արդիւնքները հետեւեալն են.

1. Նախ՝ մեղեդիների «ազգաբանութեան» վերաբերեալ, այլ կերպ ասած՝ Հայ եկեղեցական որ երգուածքներից են դրանք սերուած, ինչ է ձայնագրել արբաժորը: Խնդիրը պարզաբանելու համար երկու ճանապարհ ենք նշմարում: Մէկը՝ արբաժոր կենսագրութիւնն է, նրա կեանքի տեղաշարժերը. ծնուել է Կոստանդնուպոլսում, տաս տարեկանից Վիեննայում է, որտեղ ուսում ստանալուց յետոյ միառ-

ժամանակ որպէս մանկավարժ պաշտօնավարել է Թուրքիայում (Չմիւռնիա, Պոլիս), ապա վերադարձել Վիեննա¹⁵: Արդեօ՞ք այս մեղեդիները մասամբ Վիեննայի մխիթարեանների, մասամբ թրքաձայնց Պատարագներից են սերուած:

Միւս ճանապարհը՝ այս մեղեդիների համեմատութիւնն է Հայ եկեղեցական այլ երգուածքներից սերուած նոյն մեղեդիների հետ¹⁶: Տրամաբանօրէն մեր խնդրոյ առարկայ մեղեդիները ելեւէջային ընդհանրութեան եզրեր պէտք է ունենան մխիթարեանների միւս՝ Բիանքիւնիի ձայնագրած վենետիկեան Պատարագի հետ: Սակայն համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այսպիսի ընդհանրութիւններ գրեթէ չկան¹⁷: Որոշ ելեւէջային ընդհանրութիւններ ենք նկատել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայկական նոտագրութեամբ լոյս տեսած միաձայն «Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» (Վաղարշապատ, 1878) հետ, որը ի թիւս Մայր Աթոռում 1870-ական թուականներին հրատարակուած ձայնագրեալ Շարակնոցի (Վաղարշապատ, 1875) եւ Ժամագրքի (Վաղարշապատ, 1877), համարում է Հայ եկեղեցական երաժշտութեան առաւել ամբողջական, հաւաստի, բնագրային աղբիւրներից¹⁸:


Այսպէս, ակնյայտօրէն «նման են» այս երկու Պատարագների՝ Այտրենեանի ձայնագրած եւ Մայր Աթոռի հրատարակած «Թագաւոր երկնաւոր», «Բարեխօսութեամբ» երգերը:

15 Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ), հտ.1, Երևան, 1974, էջ 352:
 16 Հմմտ. Մ. Մուրադեան, Հայկական Պատարագը եւ նրա մշակումները, էջ 159-163:
 17 Նոյն տեղում, էջ 154:
 18 Н. Тагмизян, Теория музыки в Древней Армении, Ереван, 1977, с. 8.

13 Նոյն տեղում:
 14 Նոյն տեղում:

Նոտային օրինակ 2

«Թագաւոր երկնաւոր» (հատուած)
 ա) Այտրենեանի ձայնագրած մեղեդիական տարբերակը¹⁹



բ) Մայր Աթոռի հրատարակութեան մեղեդիական տարբերակը²⁰



Նոտային օրինակ 3

«Բարեխօսութեամբ» (հատուած)
 ա) Այտրենեանի ձայնագրութեամբ²¹



բ) Մայր Աթոռի հրատարակութիւնից²²



Ընդհանրութիւն ենք նկատել եւ երկու Պատարագների «Խորհուրդ խորին» շարականների միջեւ:


Նոտային օրինակ 4

«Խորհուրդ խորին» (հատուած)
 ա) Այտրենեանի ձայնագրութեամբ²³

19 Երգեցողութիւնք, էջ 18:
 20 Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի, էջ 11: Այս և յաջորդ 3-րդ և 4-րդ նոտային օրինակներում տեսած ձայնագրեալ Պատարագից, հայկական նոտագրութիւնից երոպականի փոխադրել է յօդուածի ճեղիմակը:
 21 Երգեցողութիւնք, էջ 27:
 22 Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի, էջ 54: Նոտային օրինակ 3բ-ում «c²» ձայնանշի (նոտայի) ձախ կողմի թեք գծիկի միջոցով նշել ենք այդ հնչիւնի փոքր-ինչ ցածր բարձրոյթային դիրքը երոպական «c²»-ի նկատմամբ:



բ) Մայր Աթոռի հրատարակութիւնից²⁴



Այսքանը Այտրենեանի-ձայնագրած պատարագեան մեղեդիական տարբերակների «ազգաբանութեան» վերաբերեալ: Ակնյայտ է, որ խնդիրը կարօտ է յետագայ մշակման:

2. Խնդրոյ առարկայ Պատարագի մեղեդիները ծաւալում են Հայ աւանդական եկեղեցական երաժշտութեանը յատուկ մոնոտոնիկալ ձայնակարգերում (լադերում): Դրանցից են՝

ա) կուարտային օժանդակ յենակէտով էոլական ձայնակարգը՝ ցէոլ.4, որի հնչիւնաշարն է²⁵.

$$f^1 - \boxed{g^1} - a^1 - b^1 - \textcircled{c^2} - d^2 - es^2$$

(տե՛ս «Թագաւոր երկնաւոր» երգն ամբողջութեամբ²⁶):

բ) տերցիային օժանդակ յենակէտով փոխադրական-լոկրիականը՝ fis փոխադրութիւն.3.

$$e^1 - \boxed{fis^1} - g^1 - \textcircled{a^1} - h^1 - cis^2, c^2 - d^2$$

(տե՛ս «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»²⁷),

գ) կուինտային օժանդակ յենակէտով հիպոնականը՝ F-հիպոն.5.

$$e^1 - \boxed{F^1} - g^1 - a^1 - b^1 - \textcircled{c^2}$$

(տե՛ս «Ամէն. Հայր երկնաւոր»²⁸),

23 Երգեցողութիւնք, էջ 3:
 24 Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի, էջ 193:
 25 Ձայնակարգային հնչիւնաշարերում քառակուսի գծով նշել ենք ձայնակարգի տոնիկան, շրջանագծով՝ օժանդակ յենակէտը:
 26 Երգեցողութիւնք, էջ 18-21
 27 Երգեցողութիւնք, էջ 43:
 28 Նոյն տեղում, էջ 60:

դ) Հարմոնիկ ձայնակարգը՝ $A - d$.

$$fis^1 - g^1 - \boxed{A^1} - b^1 - cis^2 - \boxed{d^2}$$

(տե՛ս «Միայն սուրբ»²⁹) եւ այլն:

3. Այտընեանի ձայնագրած պատարագեան մեղեդիները ծաւալուում են Հայ աւանդական եկեղեցական երաժշտութեանը յատուկ մեղեդիական ոճերով՝

ա) վանկային (վանկին համապատասխանում է մէկ Հնչիւն).

Նոտային օրինակ 5 30



բ) ներվանկային (վանկը եղանակաւորուում է 2-5 Հնչիւններից բաղկացած ոչ ծաւալուն մեղեդիական Ֆրազով), (տե՛ս նոտային օրինակ 3ա-ն),

գ) խառը՝ վանկային-ներվանկային (երգի ընթացքում զուգորդուում են վանկային եւ ներվանկային մեղեդիական ոճերը), (տե՛ս նոտային օրինակ 2ա-ն),

դ) զարդոլորուն (վանկը եղանակաւորուում է ծաւալուն մեղեդիական Ֆրազով).

Նոտային օրինակ 6 31



4. Նշելի է նաեւ, Այտընեանի ձայնագրութիւններում առկայ Հայ եկեղեցական, մասնաւորապէս՝ զարդոլորուն երգերին յատուկ տաղաչափական սկզբունքներից մէկը. երգի սկզբում, բանաստեղծական տեքստի առաջին երկու վանկերի եղանակաւորումը մեծավերջ (յամբական) ոտքի միջոցով՝ կարճ եւ երկար վանկերի յաջորդականութեամբ, ըստ կուանտիտատիւ տաղաչափութեան, եւ ապա յաջորդ վանկերի ազատ, անկաշկանդ, լայնաշունչ եղանակաւորումը³² (տե՛ս նոտային օրինակ 4ա-ն):

Այտընեան-Բէօմի բազմաձայն Պատարագը Հայ Հոգեւոր կանտատային-օրատորիալ ժանրի առաջնեկներից է եւ դրանով արդէն իսկ «ապահովել է» իր տեղը Հայ երաժշտութեան պատմութեան մէջ: Միաժամանակ այս Պատարագը, ճիշտ է, արդէն կորցրել է իր ծիսական գործառնութիւնը, այսպէս ասած, «խոնարհուել է», բայց այդուհանդերձ գեղարուեստական որոշ արժէք ունի եւ կարող է, թէկուզ հատուածաբար, կատարուել համերգներում:

32 Այս դիտարկումը մեզ լուրջ է երաժշտագետ Կ. Խոտաբաշեանը:

29 Նոյն տեղում, էջ 84:
30 Նոյն տեղում, էջ 30:
31 Նոյն տեղում, էջ 34:

ԽՐԱՏՆԵՐԸ ՊՍԱԿԻ ԿԱՐԳՈՒՄ

Անահիտ Մխիթարեան

Խրատները ժամանակի պատմութեան, ժողովրդի կենցաղի ու սովորոյթների, ազգային հոգեբանութեան ու աշխարհայացքի դրսեւորումն են¹, որոնք իրենց մէջ ներառում են տարբեր Հարցեր՝ ե՛լ խորհուրդ, ե՛լ հրաման-պարտադրանք, ե՛լ ուսուցանելու ու դաստիարակելու միջոց: Երբեմն խրատները, դառնալով պատուիրան, օրէնքի ուժ են ստանում:

«Խրատը, իբրեւ անհատի եւ հասարակութեան բարոյական դաստիարակութեան միջոց, երեւան է գալիս մարդկութեան քաղաքակրթութեան հետ միաժամանակ: ...Խրատների համար աղբիւր են Հանդիսացել ե՛լ Աստուածաշունչը, ե՛լ Կանոնասցել ե՛լ սրբերի ու ժամանակակից վարդապետների երկերն ու ասոյթները, ե՛լ իրական կեանքից անհատի ու սերունդների ստացած փորձը»²:

Միջնադարում խրատը չի առանձնացել որպէս ժանր. այն մտել է առակի ժանրի մէջ եւ կոչուել է «Թուղթս խրատական»³, «Խօսք իմաստասիրաց» եւ «Բականս»⁴ կամ պարզապէս՝ ծառ, ծառք: Մեզ հասած ամենավաղ գրաւոր նմանատիպ յիշատակութիւնը Գրիգոր Լուսաւորիչի (238-325/26 թթ.) «Յաճախապատում չի ճառերն» են, որոնք Հոգեւոր խրատներ են:

1 Խրատական ժանրի գլուխգործոցներն են խիկարի և Նուշիրուանի անունով պահպանուած երկերը, մասամբ էլ՝ «Պղնձե քաղաքի պատմութիւնը» ու այլ ժողովածոներ:
2 Է. Մ. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացիի և Գրա խրատական արձակը, Եր., 1977, էջ 40:
3 Տե՛ս Լ. Յակովբոս Տաշեան, Ժողովածոյք առակաց վարդանայ, ըստ Ն. Մաթի. տեղեկատուութիւն եւ քաղուածքներ, Վիեննա, 1900, էջ 16:
4 Նոյն տեղում, էջ 78:

1. Հայ մատենագրութեան մէջ առաջին խրատական գործերի հանդիպում ենք Ե. դարից սկսած: Մեզ յայտնի են Եղիշէի «Բան խրատու յաղագս միանձանց»-ը, Յովհան Մանդակունու ճառերը (Վասն սիրոյ եւ մախանաց եւ նախանձու, Թուղթ վասն կնաթողաց, Վասն սիրոյ)՝ որպէս Հոգեւոր խրատներ:

Հայ մատենագրութեան մէջ ամենավաղ յիշատակուած կանոններում իսկ նկատելի են խրատները, որոնք կարելի է համարել կանոնների նախահիմքը, քանի որ կանոններում պատիժը կապուում է խրատի, ապաշխարութեան կրօնական դաստիարակութեան հետ: Կարծում ենք, որ նրանց հիման վրայ էլ աստիճանաբար ձեւաւորուել են կանոնները եւ երբեմն դրանք համարուել են կանոնախրատական երկեր:

Դեռեւս Ե. դարից մեզ յայտնի են կանոնական խրատներ, ինչպէս օրինակ՝ Սահակ Պարթեւի անունով յայտնի կանոնները, որոնք ունեն խրատական բնոյթ.

...Եւ դուք քահանայք, տղայոց ամենեւին իսկ պսակ մի՛ արհնէք միգչեի ի կատարումն հասակի: Իսկ կատարելոցն որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ ի հաճոյս ինքեան, պսակ մի՛ իջլէք դնել առանց քննութեան ...⁵:

Միջնադարում խրատները տարբեր խմբերի են բաժանուել՝ ըստ իրենց բովանդակութեան: Երբեմն էլ խրատական բովանդակութիւն ունեցող ճառերն ու քարոզները, խրատական ու շրջաբերական թղթերն ու նամակներն են դիտուել իբրեւ խրատական գործեր, որոնք էլ յետագայում՝ ԺԲ.-ԺԳ. դարերում ոչ միայն իրենց

5 Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, աշխ.՝ Վ. Յակոբեան, Եր., 1964, էջ 382: